

# «ՊԵՏՔ Է ԱՐՃԱՆԱԳՐՈՒԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹԻՒՆԸ». ՓԱՇԻՆԵԱՆ

*Posted on April 11, 2024 by Keghart*



Category: [Opinions](#)



**Ասպարէզ**, 11 ապրիլ 2024

11 Ապրիլին, Ազգային ժողովին մէջ, վարչապետ Նիկոլ Փաշինեան հաստատեց, որ իշխանութեան համար խոր Վիրապէն քանի մը մեթր անդին Թուրքիա է, իսկ պատմական Հայաստանի տրամաբանութեան վերադառնալու ռազմավարութիւնը անկարելի է:

Ըստ անոր՝ պատմական Հայաստանի եւ իրական Հայաստանի հայեցակարգերուն միջեւ տարբերութիւն կայ Հայաստանի իշխանութեան եւ ընդդիմութեան միջեւ, որոնց միջեւ բանավեճ ծագած է այս հարցով:

«Մենք սերում ենք Կիլիկիայից, Հայկական բարձրաւանդակից, Վանի թագաւորութիւնից: Մեր բանավեճը սրա մէջ է՝ մենք աշխարհին պետք է Նայենք Վանի թագաւորութեան աշտարակի՞ց, թե՞ Հայաստանի Հանրապետութեան աշտարակից: Սրանում է հայեցակարգային մեր բանավեճը», ըսաւ Փաշինեան:

Ան պատասխանեց այն հարցումին, թէ ինչպէ՛ս կարելի է որեւէ տեղ ըլլայ 7րդ դարու հայկական եկեղեցի մը եւ քանի մը մեթր միւս կողմը՝ Ատրպէյճան:

«Սա շատ կարեւոր հարց է: Իսկ ինչպէ՞ս կարող է լինել 7րդ դարի եկեղեցի, իսկ մի քանի մետր այն կողմ լինել Թուրքիա, որովհետեւ խոր Վիրապը մեր քրիստոնէութեան ակունքը գտնուում է մի տեղ, որից մի քանի մետր այն կողմ Թուրքիան է: Հայեցակարգային բանավեճն այստեղ է: Մենք ընդունու՞մ ենք, որ խոր Վիրապից մի քանի մետր այն կողմ Թուրքիան է, թե՞ չենք ընդունում: Ես ասում եմ, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եւ քաղաքական մեծամասնութիւնը ընդունում է, որ խոր Վիրապից մի քանի մետր այն կողմ Թուրքիան է եւ Հայաստանի կառավարութեան համար այս արձանագրումը անվտանգութեան ապահովման կարեւորագոյն միջոց է: Եւ ռազմավարական ընտրութիւնն հենց սրա մէջ է:

Երբ ասում ենք, որ խոր Վիրապից մի քանի մետր այն կողմ Թուրքիա չկայ, մենք ընտրում ենք պատմական Հայաստան: Երբ ասում ենք, որ խոր Վիրապից մի քանի մետր այն կողմ Թուրքիան է, մենք ընտրում ենք իրական Հայաստանը: Նոյն մօտեցումն է Ոսկեպարի դէպքում: Այն ճանապարհները, որով մենք դուրս ենք գալիս Հայաստանի ինքնիշխան տարածքից մեր մտքում, քաղաքականապէս, երբեմն ոչ քաղաքականապէս այդ ճանապարհները հնարաւորութիւն են տալիս ուրիշներին մտնել մեր ինքնիշխան տարածք: Ասում եմ, որ մենք այդ ճանապարհը պետք է փակենք: Սա պետք է արձանագրենք որպէս ռազմավարական մշտականութիւն: Մենք պետք է արձանագրենք պատմական Հայաստանի տրամաբանութեանը վերադառնալու ռազմավարական անհնարիտութիւնը: Այստեղ է մեր բանավեճը իրականում: Եւ սա կարեւոր բանավեճ է», եզրափակեց Փաշինեան:

## Comments



**Armo** – 2024-04-21 18:40:40

Հայ ժողովրդի վերջին հարյուր ամյակի քաղաքական պայքարը չի եղել պատմական Հայաստանի համար, այլ եղել է մինչ այս օրս գոյություն ունեցող միջազգայնորեն միակ ճանաչված սահմանների համար, որը օկուպացված է լենին-քեմալ պայմանագրով: Նիկոլի հիմարությունները կրկնել է Ասպարեզը, իսկ Գեղարդը ինչի՞ է որոշել արտատպել այս հիմարությունը պարզ չի: Այն անհատները, քաղաքական ուժերը, կուսակցությունները, շարժումները՝ ովքեր համամիտ են ԽՍՀՄ սահմաններով սահմանազատմանը ու Հայաստանին զարգանալու հեռանկարից զրկելուն, ապա իրենք ծառայում են թուրք-ռուսական եղեռնագործ համակարգին: